

Սկսաւ Սուրեն գետին աջ կողմէն երթալ դարձեալ: Թեպետ Շեյխին գանձատունեն առած էր զԷնքերը՝ բայց չէր գննած Նոցայ լաւութիւնն. հիմա միտքն եկաւ՝ քաշեց պողովատը եւ սքանչանալով երկաթին վրայ ու շողացնելով, գոհ սրտիւ գրաւ պատեանը եւ դառնալով իր ընկերաց ըսաւ.

– Այդ մեր Շեյխը լաւ աւարի վրայ ինկեր է, իր անապատները չէին կրնար բուսցնել ոչ այսպիսի զէնք եւ ոչ այդպէս ոսկիներ: Նայեցէք ձեզ տուած ոսկիներս՝ բոլոր Սասանեանց են, եւ այս զէնքերն էլ բոլոր Պարսից արքայական դրոշմը կը կրեն:

Այս խօսքերը զրուցելուն գլուխը կը դարձնէր երբեմն դիմացէն եկող հեծելոց, որ գետին կը մօտենային յանդուգն արշաւանոք: Իրենց այս ընթացքը, որ Սուրենի կ'իմացնէր եւ իրենց նպատակը, փոխել չի տուաւ իւր հանդարտ քայլուածքը եւ քթին տակէն կ'ըսէր. «Եթէ այսքան քիչուոր էք՝ մեզմէ ձեզի օգուտ չի կայ»: Աչքը դիմացը կը հետազօտէր, աւագի բլուր մը հանդիպելով ձին քշեց վեր ելաւ. առջի նայուածքին՝ յօնքերը խաւարեցան ընդ մը, սեւ ամպ մը պատեց երեսը. բայց փայլակի պէս անցաւ եւ ժպիտ մը յաջորդեց, սակայն այդ ժպիտը նաեւ ահարկու էր:

– Տղաք,— ըսաւ,— տասն-տասներկու հոգի մեր առջեւ կ'ելնեն, մեր ձիերը Արաբիոյ հազարներու ընտիրքն են, մեր զէնքերն ամենալաւն են, դու, Գրիգոր, Մամիկոնեանց քաջ թոռն ես, դու էլ, Գագրիկ, որ անգէն՝ արջ մը խողելու ուժ ունիս, քաջ եղի՛ր, միայն ամուր կեցիդ ձիուդ վրայ, նիզակի հարուածներէ լաւ պաշտպանէ ինքզինքդ վահանովդ, իսկ մուրճդ՝ գործածէ՛ ինչպէս գիտես: Տէ՛, մտրակեցէ՛ք ձիերը եւ ինձ հետեւեցէ՛ք:

Այս խօսքերուն վրայ ամպի փոշի մը պատեց երեք հեծեալքը եւ ձին, որ պաշարը բարձած էր՝ կը հետեւէր անբաժան Գագրիկի ձիուն որուն ընկերն էր: Երբ արաբք տեսան սոյն ընթացքը, որ իրենցմէ կը խուսէին եւ կը խոտորէին հաջէ ձախ, իրենք էլ խոտորեցան արգիլելու համար: Երկու-երեքը միասին նիզակով Սուրենի վրայ յարձակուիլ կը պատրաստուէին, որ միշտ առջեւէն կը ձիավարէր, եւ որու նիզակի հարուածը Նոցայ առաջինը գլորեցուց առանց շարժելու ժամանակ թողլու: Գրիգոր Նորա օրինակին հետեւելով նիզակի հարուած մը տուաւ իւր վրայ յարձակող աւագակին եւ այնպիսի սաստկութեամբ, որ նիզակը խորտակեցաւ, երբ մարդը գետինն ինկաւ: Իսկ Գագրիկ, որ իւր նիզակը բեռ մը կը համարէր՝ «Ա՛ռ իշխանիկ» ըսաւ եւ Գրիգորի տուաւ: Ենք մուրճը աջն առած՝ վահանով պատրաստեալ սկսաւ շարունակել իր ընթացքը, վասնզի արաբացի խումբը երկու գոհ տալէն վերջ դադրեցաւ եւ կը